7. ՃԱՇՈՑ։ Կ. Պոլիս, տպ. Սարգիս դպիրի, 1714, 1175 երկսյուն զարդափակ էջ, պատկերներով ու զարդերով։ Հանրային գրադարան, № 1363։

Հանրային գրադարանի միակ օրինակը անվանաթերթ չունի, սկսվում է 3-րդ չհամարակալված էջից։ ՌՃՀԴ էջում՝ «Հիշատակարան Ճաշոցիս», որտեղ կա տպագրության թվականը «Ի թուականութեան կենարարին մերոյ ՌՁԺԴ, և հայոցս ՌՃԿԳ», հիշվում է տպագրիչի որդի Մարտիրոսը և տպարանի մյուս աշխատողները։ Հետաքրքիր է Սարգսի ասածը իր մասին. «...մեծաւ ջանիվ և յոյժ աշխատութեամբ զամենայն քանդուածս ծաղկանց և ծաղկագրաց՝ և պատկերացն՝ անպակաս օրինուածովք յօրինեցի», արդյո՞ք սա նշանակում է, որ տպագրիչ Սարգիսը նաև նկարիչ է եղել և զարդող։

Սարգսի տպագրությունները միշտ համարվել են խիստ ցածրարակ, թերևս Պոլսի տպագրությունների մեջ ամենավատը, հակառակ դրա մեր մատենագիտության ու բանասիրության մեջ չհիշատակվող ներկա Ճաշոցը աչքի է ընկնում ոչ միայն իր շատ գեղեցիկ զարդերով, այլև հաջող տպագրությամբ և ստիպում է, համենայն դեպս, մեղմացնել Սարգսյան տպարանի մասին հաստատված խիստ անբարենպաստ տեսակետը։

8. ՏՕՆԱՑՈՅՑ։ Կ. Պոլիս, տպ. Սարգիս դպիրի, 408 շրջափակ էջ, զարդեր։ Հանրային գրադարան, № 65։

Տիտղոսաթերթը սկսվում է. Աստուած բարերար բառերով, ապա 15-րդ էջում՝ Տոնացոյց ըստ աւուր Պատշաճի։ Հիշատակարանը 404—408 էջերում։

Հանրային գրադարանի միակ օրինակում տիտղոսաթերթը ներքևից պատռված է գուցե տպագրության թվականի հետ, դրքի ուրիշ մասում թվական չկա։ Առաջաբանի մեջ ասված է, որ տպագրությունը կատարվել է «Ի Հայրապետութեանն տեառն Աստուածատուրի սատուածաբան կաթուղիկոսի ամենայն Հայոց... Այլև առաջնորդութեան երկուց աթոռոց սուրբ Երուսաղեմայ գրիգորի արհի եպիսկոպոսի. և մայրաքաղաքիս ովհաննիսի աստուածաբանի», նկատի ունենալով այս անձանց գահակալության շրջանները՝ տպագրության ժամանակն ընկնում է 1715—1725 թվականների միջև։ Հիշատակարանում կա Սարգսի («յիշեցէք զծառայս ձեր զտրուպ սարգիսս»), նրա տպարանի աշխատողների, հոր՝ Հակոբի, և որդու՝ Մարտիրոսի անունները («զհարազատ որդեակն իմ զՄարտիրոսն, որ տրլընջեան և ի գիշեր ջանս յոգնագոյնս եղեալ ի սրտի, և յոգւոց հանելով միշտ, աշխատէր և տառապիր ի շարաբարդութիւնս ի սրբագրութիւնս և ի համարարացութիւնս»)։

Աստվածատրյանների նորահայտ տպագրություններ

Եփրեմ Խուրի ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ։ Կ. Պոլիս, տպ. Աստվածատուր դպիրի, 1741. 95 (1 չ հ.) զարդափակ էջ, անվանաթերթը նկարազարդ շրջանակի մեջ, դարձերեսին Եփրեմ Ասորու, իսկ 76-րդ էջում Գրիգոր Լուսավորչի պատկերները, զարդեր։ Հանրային գրադարան, № 3257, Մատենադարան, № 1062։ Էջ 94—96 հիշատակարան, ուր հիշվում է «զտպելն տուօղ զկարնեցի քարադործ Ղազարի որդի զգրավաճառ եղբայր մանուկն։ Ընդ նմին և զտրպագրօղ պարտաւոր անձն իմ զաստուածատուր. և զհաշեալ և մաշեալ որդեակն իմ զտիրացու յոհաննէս», վերջում՝ «Ի թուականիս ՌՃՂ. սեպտեմբերի Ի»։

10. ՍԱՂՄՈՍԱՐԱՆ։ Կ. Պոլիս, տպ. Հովհաննես Աստվածատրյանի, 1758. 377 (7 չ հ.) զարդափակ էջ, պատկերներ, զարդեր։ Մատենադարան, № 1609։